գած մանր վէճերը և նրանց ներկայացուցիչն է իշխանութեան առաջ։ Այսպէս, օրինակ, ոսկերիչներն ունեն իրանց պետը, որ կոչւում է զարգարբաշի, կամ, եթէ թարգմանենք հայերէն, ոսկերչապետ, դերձակները՝ իրանց դարզիբաշին և այլն։ Արհեստաւորների պետի իշխանութիւնը ժառանգական է, եթէ ժառանգները արժանի են այդ պատւին, իսկ եթէ արժանաւոր ժառանգներ չը կան, այն ժամանակ արհեստաւորները ընտրում են իրանց միջից իրանց համար պետ և ներկայացնում ի բարձրագոյն հաստատութիւն։ Երբեմն գանձատանը և կամ նահանգապետը նշանակում են արհեստաւորների պետին ըստ իրանց հայեցողութեան։

Պարսկաստանը բնական բերքերով հարուստ մի երկիր է. մի հեղինակաւոր ռուս մասնագէտի կարծիքով *) միայն Ղարադաղում ահագին հանքային հարստութիւններ կան—պղինձ, երկաթ, կապար, արծաթ. Ուրմիի լիճը աղի մի անսպառելի աղբիւր է ներկայացնում. Էլբրուսը հարուստ է քարածուխով և բնական փիրուզայով, կայ նաև նաւթ։ Բայց այդ բոլոր հարստութիւնները, դժբախտաբար, չեն մշակւում, քնած են երկրի խորքերում։ Սակայն, երբ երկաթուղիները ամեն ուղղութեամբ կը կտրեն այս երկիրը, երբ այս երկրի ընդարձակ դաշտերում կը լսուի շոգեմեքենայի սուլոցը, այն ժամանակ կը զարթնեն այս երկրի քնած ուժերը, կը մշակւեն երկրի խորքերում թաղուած հանքային հարստութիւնները և Պարսկաստանը առաջ կը կոխէ քաղաքակրթութեան հաստատ ճանապարհը։ Պարսկաստանի ապագան մեզ պայծառ գոյներով է երևում, որքան էլ ճընշող և յուսահատական է այժմ նրա իրականութիւնը։ Այդ երկիրը դեռ եւս դեր ունի խաղալու պատմութեան ասպարիզում։

Ց. ԿԱՐԱԽԱՆԵԱՆ

---

## Նաւթարդիւնաբերութիւնը Պարսկաստանում

Աչքառու եւրոպացիների հետազօտութիւնները ցոյց տուին, որ հարուստ նաւթահանքեր ունի և մեր հարևան Պարսկաստանը. Պարսից Ծոցին կից, Արաբստան կամ Խուժաստան նահանգում, ինչպէս և Լուրիստանում, որ կից է Թիւրքիայի

*) Ломницкій—„Персія и персы", եր. 167.

սահմանին և մօտ Բաղդատին, այնքան առատ է նաւթը և այնպիսի մեծ ապագայ ունի նրա շահագործութիւնը, որ երկու տարի առաջ կազմուել է անգլիական մի մեծ ընկերութիւն, աւստրալիացի մի միլիոնատէրի մասնակցութեամբ, և ստացել է պարսից կառավարութիւնից իրաւունք 60 տարուայ ընթացքում շահագործել այդ նաւթային հողերը։ Նաւթ գտնուել է և Կասպից ծովի հարաւային ափում, Էնզէլիի մօտերքում, Լրագիրները հաղորդում են՝ որ Լօնդօնում արդէն կազմակերպուել է մի անգլիական ընկերութիւն այդտեղի նաւթային հողերն ևս շահագործելու նպատակով։

---